

ՌԵՈՂԻԿԻ ԼԱՄԱԿՆԵՐԸ ՌՈՒԲԵՆ ՈՐԲԵՐՅԱՆԻՆ

1974 թ. ապրիլ ամսին Ֆրանսահայ մի խումբ զրուսաշրջիկների հետ Հայաստանում եղանակ և արևմտահայ տաղանդավոր բանաստեղծ Ռուբեն Որբերյանի տղան՝ Հարություն Որբերյանը և մեծ աղջիկը՝ Արուսյակ Որբերյանը նրանք մեզ հանձնեցին արխիվային (ձեռագիր և տպագիր) մի շարք նյութեր*, լուսանկարներ, որոնք հետաքրքրություն ներկայացնող վավերագրեր են և հնարավորություն են տալիս ավելի լավ հասկանալ Որբերյանի ստեղծագործությունը, ինչպես նաև ժամանակի գրական, հասարակական-քաղաքական կյանքը:

Ստացված նյութերի մեջ են Որբերյանի մի շարք բանաստեղծությունների ձեռագրեր, մամուլում տպագրված, բայց զրբերում տեղ չգտած գործերի լուսանկար-պատճեններ, մի շարք նամակներ, որ գրել է Որբերյանը, և նամակներ, որ ստացել է նա:

Այդ նյութերի մեջ են «Վհատին երգը» (1898), «Արուսյակին» (1928), «Տոնադար» (1929), «Ս. Աստվածածին» (1930), «Կուզեի երգերս դարերով երգվեին» բանաստեղծությունների (մի մասը անտիպ) ձեռագիր օրինակները, «Առաքինության մրցանակներին» հանդես ժամանակ ունեցած ելույթների ձեռագիր տեքստերը և այլն: Մի շարք կողմերով շահեկան են նաև նամակները, հատկապես նրանք, որ Որբերյանը ստացել է Արշակ Չոպանյանից, Սահակ Մեսրոպից, Քեոզիկից:

Որբերյանի թղթերի մեջ են Ֆրանսիացի բանաստեղծուհի Մ. Պոստի (M. Poste) ձեռագիր մի բանաստեղծությունը Հայաստանի և հայ բանաստեղծության մասին, Որբերյանի թաղման ժամանակ Վահան Մալեզյանի հիշատակի խոսքը և այլ նյութեր ու լուսանկարներ:

Այդ նյութերից այսօր հրատարակում ենք Քեոզիկի շորս նամակները՝ ուղղված Որբերյանին: Այդ նամակները, որ գրված են 1921—1926 թթ., պատմում են մեր ժողովրդի արևմուտահայ հատվածի ողբերգության, արևմտահայ գրողների ողիսականի մասին:

Քեոզիկը՝ Քեոզորոս Լապճիհյանը (կամ Լապճիհյան) ծնվել է 1873 թ. Պոլսի Իսկյուտար թաղամասում, Երզնկայից գաղթած Գրիգոր Պողաճյանի (հետո Լապճիհյան) ընտանիքում: Պերպերյան վարժարանը նյութական պայմանների պատճառով կիսատ թողեց նա, մտավ Ռոբերտո կոլեջ, ապա ինքնակրթությամբ հարստացրեց գիտելիքները և իր ողջ կյանքը նվիրեց հայ գրականությանն ու մշակույթին:

1900-ական թվականներից սկսած մամուլում երևացին Քեոզիկի պատմվածքները՝ «Եյանքի հատորեն փրցված էջեր» խորագրի տակ: Առանձին գրքով Քեոզիկի պատմվածքները լույս տեսան 1912 թ., «Կաղանդ» վերնագրով: Քեոզիկը հեղինակ է նաև պատմագիտական, բանասիրական մի քանի աշխատությունների: Ինչպես օրինակ, Իզմիրյան մրցանակի արժանացած «Պոլսո հայեվարը»՝ պոլսահայ խոսակցական լեզվի բառգիրքը, «Տիպ և տառ»-ը՝ նվիրված հայ գրերի գյուտի -1500 և տպագրության 400-ամյակին, հայ մտավորականների և հուգեոթականների անլուր տառապանքների և սպանությունների մասին գրված «Հուշամատյան ապրիլ 11-ի» և «Գողգոթա թրքահայ հոգեորականության և իր ստրին» աղետալի 1915 տարիին» և այլ ուսումնասիրություններ, բազմաթիվ և բազմաթիվ հոդվածներ՝ հայ մշակույթի ու պատմության ամենատարբեր հարցերի վերաբերյալ՝ տպագրված զանազան հանդեսներում և, իհարկե, հատկապես իր հրատարակած «Ամենուն տարեցույցի» 19 հատորներում:

«Ամենուն տարեցույցի» դերը մեր գրականության ու մամուլի պատմության մեջ մեծ է: Երկու տասնամյակից ավելի (1907—1929 թթ.), անընդմեջ (բացառությամբ քառորի՝ 1916—19 թվականների), տարբեր քաղաքներում Քեոզիկը լույս ընծայեց դրանք՝ կատարելով տիտանական աշխատանք, շնայած ծանր վշտերին ու օրվա ապրուստ հայթհայթելու դժվարություններին: «Երկինքն կրակ ալ թափի, դուռ նորեն կը հանես «Տարեցույց»-գրում էր Սիսմանթոն: («Ամենուն տարեցույցը», 1916—20, էջ 9):

* Որի համար խորին շնորհակալություն ենք հայտնում նրանց: (Բոլոր այդ նյութերը տեղ գտան Ե. Չարենցի անվան գրականության ֆանդարանում):

Նա մեղվաշան աշխատանքով իր տարեցույցերում հավաքեց հայ կյանքի անցյալ ու ներկա պատմությունները՝ գրեթե բոլոր բնագավառներից: «Հարգանքով և երախտագիտությամբ արտասանենք այս անունը,—գրում է Շ. Շահնուրը,—այս անընկճելի հասկաքաղը, որ հայ կյանքին ածունեբուն և անդատաններուն ամբողջ բերքը հավաքեց և զայն մթերեց իր լեռնակուտակ տարեգրքերուն մեջ իբրև կենդանի և անկորուստ հիշատակարան» (Շ. Շահնուր, «Բաց տոմար», 1971, Փարիզ, էջ 71):

Քեոզիկի տարեցույցերը ժամանակին բարձր է գնահատել արևմտահայ մտավորականության գրեթե մեծ մասը: Տարեցույցերի արժեքը հատկապես մեծ է այն պատճառով, որ նրանցում տեղ են գտել մեր գրողների, մտավորականների անտիպ գործեր, կենսագրական տեղեկություններ, լուսանկարներ, դրոնք այսօր պատմական վավերաթղթերի արժեք ունեն:

Քեոզիկն էլ տեսավ Հայ Գողգոթան. 1915 թ. նրան բանտ տարան, 1916-ին քշեցին արսոր: Պատերազմից հետո, հրաշքով փրկվելով մահից, կրկին վերադարձավ Պոլիս. լծվեց իր սիրեցյալ գործին: 1922-ին ստիպված թողեց Պոլիսը, անցավ Հունաստան, հետո՝ Կիպրոս, հետո՝ Փարիզ (կենսագրական որոշ մանրամասներ տե՛ս ծանոթագրություններում):

«Ամենուն տարեցույց» 1920 թ. նյութերը գրեթե պատրաստ էին, տպագրությունը արդեն սկսվել էր... երբ 1926 թ. մայիսի 24-ին, փարիզահայ մի թերթի խմբագրատան մեկ սենյակում,—«ուր կը գրեր, կը ննչեր, կը բնակեր և անկյուն մը կը պատրաստեր իր ամենօրյա ճաշը»,—Քեոզիկը մահացավ: Ճիշտ էր և. Բաշալյանը, երբ այդ առթիվ ասում էր. «Հայ գրականության այս գինձորյալ մանուկը... մեռավ պատնեշին վրա, իր բուսած դիրքին հավատարիմ» («Ամենուն տարեցույց», 1929, էջ 250):

Ստորև հրապարակվող նամակները կրկին հաստատում են այդ խոսքերը և նոր կողմերից լուսաբանում Քեոզիկի կյանքի (նաև ժամանակի) պատմությունը:

ՎԱՋԳԵՆ ԳԱՐՐՈՒԵԼՅԱՆ

1

Սկյուտար, 18 փետրվարի, 1921 թ.

Սիրելիդ իմ Որբերյան.

Ձես կրնար երևակայել, ի՞նչ անանուն ուրախություն մեկնիմեկ համակեց հոգիս՝ երբ երեկ Հովակիմյան վաճառատան մեջ ինձի հատկացյալ ապակեպատ տարանին մեջեն դուրս հանեցի ծրար մը՝ որուն պատատին վրա կարոտակեզ աչքերս կընթեռնուիս իսկույն անունդ ու հասցեդ: Աքսորե դարձես ի վեր¹, շատ անգամ կանցնեիր միտքես, բայց քեզի գրելուս հաճույքե՛ր զրկված մնացի, ցորչափ գիտեի թե հեռացած էիր «ավազներու և արևներու դժխեմ հայրենիքեդ»² և Փարիզի հասցեդ անծանոթ կը մնար ինձ: Թեև նվիրած գիրքիդ³ չէր ընկերանար համակ մը, բայց անոր ճակտին դրոշմած համբույրդ կը մեռունվեր՝ անունիս կցած «սիրելի» ածականովդ, քաղցր վերհուշմամբ անցյալին: Գիրքդ երեկ գիշեր թերթեցի, դարիպի խուցս մեկուսացած, և աշովին թարթափեցա անոր մաքրափայլ էջերուն մեջ, մտովին թարթափելու համար վերջեն, որպեսզի աշալուրջ ու հիախա՛նդ պրպտիմ հոս մտածումներուդ և զգացումներուդ բյուրեղացած մարգրիտները: Պիտի խոսիմ գալ տարի Տարեցույցիս մեջ Ովասիս-իդ վրա⁴, զոր կյանքիդ անապատին մեջ ցավատանջ դեզերումներովդ ես կերտեր, անոր ջուրին, ծառին ու սովերին մեջ Հայու սիրտդ թրթռացնելով⁵:

¹ Հանցանքն անճարակ կազմարարինդ է անշուշտ, որ «Ովասիս»-իդ կավածեն ակամա խորեք էր մաս մը, ինձ միայն ի վնաս: Ըսել կուզեմ, 80-րդ էջեն 97-րդ էջը կը ցատկեռ, յոթներորդ ֆորման բուրդովին մոռցված ըլլալով մեջը դրվիլ: Մատենամուրի հանգամանքս ծանոթ ըլլալով շատերուն, կը Նուսամ, ո՞ր աչս գրկուս կը դարմանվի փութով:

1916—20-ի անցյալ տարվան Տարեցույցիս մեջ (էջ 211—267) ընդհանուր գիծերով պատկերացուցեր էի միամյա բանտարկությունս և եռամյա աքսորս⁵, որոնցմե ողջ դուրս ելլելու հրաշք մըն էր պարզապես, քանի որ ինծի պես հարյուրավորներն⁶ գացին ու շեկան⁶, և այսօր Օտյանի⁷, Անտոնյանի⁸, Շամտանճյանի⁹, Խաչատրյանի¹⁰ ու Տեր-Հակոբյանի¹¹ շարքին՝ իմ վերապրումս ալ բախտին մեկ կատակն է (գուցե անհամ ու ցուրտ տեսակեն), քանզի Տավրոսի լեռներուն՝ փապուղիներուն* մեջ քար կոտրելով և «սիրտիս վրս քար դրած» կարոտի ու տառապանքի անվերջ ամիսներ և շուսցող գիշերներ բոլորելի վերջ, երբ 1918 նոյեմբերը չվաններով քաշելով բերի և կեղծ անունես հրաժարելու, «անուշիկ տունս» դառնալու ժամը հնչեց, կերպարանսփոխություն մը հոն՝ տակնուվրա ըրավ հոգիս։—Արշակունհիս¹², զրկանքի տարիներու ընթացքին՝ surmenage**—է ծյուրած, ծնգած, պտիկ վահագնս¹³ հասակս հասած...: Դադրեցուցի իսկույն կնոջս «դաս»-երը և լծվելով գրչի սյարապմանցս՝ փորձեցի ատտակ-պատտակ*** բույնս վերակազմել: Չնայելով իմ ալ ֆիզիքապես քայքայեալ վիճակիս, վճարմամբ հողվածագրության սկսա թերթերու մեջ և 24 ամիսներու տևողության՝ աջողեցա լույս ընծայել հետևյալ երկերը. 1) Հուշարժան Ապրիլ տասնամեկի¹⁴ (սգահանդեսի հանձնախումբեն ինձ հանձնարարված և մեկ ամսվան մեջ գրված ու տպված), 2) Գողգոթա քրեական հոգևորակաճության և իր հոտին՝ աղետալի 1915 տարիին¹⁵ (Պատրիարքին կողմն ինձ հանձնարարված 1000 էջանոց 4 հատոր Զարդապատում, որուն 4-րդ հատորը կա հիմա ձեռքս. մանրամասնությունը տես Ամ[ենուն] տարեց[ույց], 1921, էջ 313), 3-4) Ամենուն Տարեցույցը (1920 և 1921 տարիներու. վերջինեն օրինակ մը, ընտիր թղթով, այսօր իտալ[ական] թղթատան հանձնեցի անվանդ, հանձնարարյալ, խնդրելով որ ընդունիս զայն իբրև հավաստիք անենեզ սիրույս), 5) Զուլումը և մեր ուրբեր (Որբերու Փրկության Հանձնաժողովի կողմն հրատարակված մեկ ճառ՝ որ 500 ոսկի ապահովեց նույն գործին, խոսած գիշերս ալ ի Գընալը՝ 150 ոսկի միանվագ, ինքնաբերաբար, 2 ունկնդիրներե): Ի մոտո մամուլի թերևս հանձնիմ նորավեպերուս մեկ երկրորդ փունջն¹⁶ ալ, եթե հարմարիմ տպագրելին հետ:

Ահավասիկ, սիրելի եղբայր, համառոտ համարատվությունը գր[ական] աշխատությանցս՝ Զինագագարեն ասդին: Ես, գրեթե լքած բաթրոն**** և գործատեղի՝ ուր կյանքիս 26 տարիներն էի սպաննած¹⁷, այդ աշխատություններովս ապրեցա և ապրեցուցի իմիներս, մինչև զանոնք զրկելս Զվիցերիա: Վեց ու կես ամսն ի վեր կինս Leysin է արդեն, «սանաթորիում»-ի մեջ¹⁸, Մոն-Պլանի բարձունքներուն, օդն ու արևն սպասելով իր կողուսած առողջությունը: Զավակս ալ Monthey¹⁹ էր ասկե առաջ, ադամանդի գործատուն մը՝ որուն հայազգի տերը խղճալով անոր գործավորի վիճակին վրա և ուսման մասին տածած անսահման սերն իմանալով, խրկեց զինք նէղաթեկ²⁰ դպրոց մը, ապահովելով անոր ուսանողական երկու տարիները: Փառք Տիրոջը. պատճառներ շատ զորավոր չունիմ՝ վիճակես դժգոհելիք, ցորչափ ամուսինի և հոր պարտականությունս մեջ չեմ թերացած և ցորչափ լեյզիներ

* Թունել (փապար—ճեղք, ծակ և ուղի ծառերից կազմված բառ):

** Գերհոգնածություն (ֆրանս.):

*** Բառարաններում շփոթանք բացատրությունը, օգտագործված է՝ հապճեպորեն, մի կերպ իմաստներով:

**** պատրոն, տեր (ֆրանս.):

կ'ստանամ լուրեր՝ բավական հուսատու: Միայն նժդեհի կյանք մըն է իմ վարածս, որ կ'անհամոքսի* հետզհետե՝ շուրջիս ռաֆայելյամբը, Ամալույթուն մըն ալ հոգիիս մեջն է արդեն: Հուլիսի կանթեղը շմարած՝ տեսնեի՝ կրկին սիրելիներս, և հասնեի, հասնեի՝ անոնց՝ անկարոտ...:

Անդին մի ոմն Հ. Օշական (Քյուֆեճյան)²¹—որ՝ որպես կուսակցական ու մտավորական՝ Հայ Տառապանքին շոշորթն** զրկեց վեճնամորթին վրա, գերմանատարազ փախուստովն ի Պուլկարիա,—ելել էր «Ճակատամարտի»²² մեջ զիս լվալ վերենն ի վար, գր[ական] գործունեությունս քննադատելով շարաշար և նշույլ մը անգամ չուզելով տեսնել անոր մեջ՝ իբրև դուլզն ինչ արժանիք:—Ահավասիկ այդ սոփեստութենեն ինչ ինչ հատվածներ. «...կը պատկանի սերունդի մը որուն գույնը դժվարավ պիտի ճշտե մատենագիտության պատմությունը: Իրապաշտներուն և արվեստագետներուն մեջտեղը կ'իյնա տժգույն մարդերու այդ կարավանը, մեծ մասը կին... Ատոնց մոտիկեն, անոնց փեշերը պագնելով... երկրորդ խումբ մը գաճաճներու... որոնք հրապարակ բերին անանուն գրականությունը...: Ի՞նչո՞րիկ առաջապահներեն է այդ կարավանին. մարդ մը՝ որ մուրացկան բանաստեղծներու կոնակն է տված փրկիչներուն շուրջառը. մարդ մը՝ որ տարվե տարի ինսայած է մեր հետզհետե՝ ծնրացող գրողներուն դառնությունները: ...Անպատանառ կուզեմ դիմադրության մը հագցնել ամեն էջի ինքզինքը պարտադրող հավակնության մը՝ որ մինչև մրցումներե պսակվելու ունայնամտության առաջնորդած է զինքը: ...Աղաշողական ու ծնրադրական մեթոդեն դուրս ուրիշ միջոցի անընդունակ եղած է:—Ձեռքը անցածը կը նետե թեզկիահրն*** տակը, տենդագին ակընկալությունը մեջ երևակայական շահերու: ...Մեծ տարտղնումի մը դժգույն գործավորը եղած է: ...Դժբախտ անժառանգության մը խնայած է անոր ինքնատպության շնորհը, խորության հրապույրը ու նույնիսկ թուղթերուն ծոցը շնչումին նրբակերտ քաղցրությունը: *Ralé***** մը: ..Անուն չունեցող սրբապղծություն մըն է հանդգնությունը այդ մարդուն, որ մեր լեզուն ծիծաղելի ընելու շափ կը ուսկացնե: Նվազ դժբախտ չէ իր արծակը, քաշքշուն ու մանվածապատ: ...Զրկված՝ տեսնելու շնորհեն, կը վազե զարդարանքին...: Թեոդիկ մուրացկան մըն է: ...Մեր գրականության վերջին անկումին ուղղակի պատասխանատվությունը կ'իյնա իրեն նման կարգ մը թուլամորթներու: ...Ան գովեց ու շողորթեց, մեծցուց ու փառաբանեց: Ու ան շահագործեց դեմքերն ու անունները»: Գրական հասկացողության տեր երկու հոգի, Օտյան և Հ. Ասպետ²³, շուրջացան դեմ գրելու մախանքն**** կուրացած այս Զոյիլին²⁴, երեսին տալով իր պոռացող «անարդարությունը»: Ու մտածել թե կուսակցության մը օռկանը տեղ կու տա անոր, խաչը հանելու համար ինձի պես բազմամեղ ... «անկուսակցական» մը՝ որուն քրճիքը՝ հանցանքն էր եղած շընդունիլ հրավերին՝ Հ. Յ. Գ.²⁵ մկըրտվելու...: Ախոյանիս աչքին փուշ դարձած էր մանավանդ այն պարագան թե Տառեցույցս շահու առատ աղբյուր մըն է եղեք,—պարագա՛ զոր քանիցս

* անհամանում է:

** հետքը, նշմար, մնացորդ:

*** Դազգահ, հաստոց, արհեստավորի սեղանը, այստեղ կոնկրետ գրաչարի, սպագրիի զազգահը:

**** վրիպած, ձախողված:

***** նախանձիք:

կրկնած էր: Եվ ի՞նչ շահ,— դեղի ու բժշկի հատկացվելի՞ք դրամ, մահվան դեմ ոգորման համար ողորմու՞ւկ ռազմամթերք, որուն վերջին փամփուշտնե՛րն է, որ կը քաշեմ հոսկի մինչև Մոն-Պլան, Franc suisse-ին* 4-ը մեկ օսմ[ան-յան] ոսկիի գնելով ամեն իժիր...**: Զխալնածնե՛րը, հոգով-սրտով սեե՛րը բոլոր՝ որոնց քով խղճմտանքը վա՛ր է Տաճիկեն...:

Կը ներես, ազնիվ Որբերյան, եթե քիչ մը էվելոք բացվեցա վիշտերուս հոծույթեն: Ինձի պես մեկուն (որ կյանքին դեմ սրդողած մըն է և շատ տարբերություն չունի «Քս-ի բարեկամն է, որ պատանքը պատռելեն վերջ ժպիտն ուրացավ»)՝²⁶ կելլեն «շողոթորթ» և «մուրացկան» զրուցել անամոթաբար. մեծերու, ճշմարիտ արժանիքներուն հանդեպ անվերապահ հիացումս շփոթելով շողոթորթության հետ, գուցե կամավոր կուրույթյամբ մը: Բայց ես պիտի շարունակեմ, ցվերջ անվթար պահել հոգվույս մեջ այդ ամենեն ավելի ազնվացնող զգացումը, անով շափելու համար իմ «պզտիկ մեծություն»-ս, հաշաղկոսներու*** «մեծ պզտիկություն»-ը: Զոր օրինակ պիտի չը դադարիմ քեզի հիացող մը ըլլալի և հիմակվնե պիտի աղաչեմ քեզի, որ նկատի առնես Տարեցույցիս տարիներե ի վեր այրիանալը քու մեկ արձակեդ կամ բերթվածեդ ու ըստայնմ դարձի գաս՝ գալ տարվանիս համար անտիպ մը հղելով: Աշխատակիցներես քանինե՛ր զո՛հ գացին յաթաղանին: Որչա՛փ դժու վար է հիմա ինձ համար Տարեցույցի գր[ական] բաժինը կազմել՝ ցրվան ցանցառ ուժեր հոն հրավիրելով: Զերազ²⁷, Դուրյան²⁸, Թեքեյան²⁹ ու Պարթևյան³⁰ այժմեն իրենցը խոստացան: Եթե սրտագին հրավեր մը մեղք մըն է կամ... մուրացկանություն, Հայ Գրականություննիս թող գիտնա թողություն տալ անոր, իր փառքին համար: Կուզեմ ունենալ նաև վերջին լուսանկարդ, կամ ա՛յն որով «Ովասիս»-իդ նախագուռը դարդարած էիր: Արդոք ունի՞ս կամավորի³¹ տարազովդ ալ: Ի՛նչ հուզումով տեղեկացա կյանքիդ այդ զորվագին ալ: Գաղափարի ընկերներուդ եղերաբախտ վախճանեն վերջ, ճըշմարիտ Հայու սիրտիդ վրա այդ բա՛րկն ալ զգացիր ես, քամբախտ սիրելիացդ ի վրեժ՝ գուպարելու**** մարմաջով:

* * *

Սս ավարտեցի ըսելիքներս, գուցե շարաշա՛ր իսկ գործածելով ունկընդ-րությունը: Շատ խոսեցա, ասով՝ տարիներու կարոտս առնելու և վիշտերես մասեր զեղչելու հույսով: Անձկանոք պիտի սպասիմ պատասխանիդ:

Անցյալ տարվան հատորս եթե ձեռքդ չէ անցած՝ պատրաստ եմ խըրկելու օրինակ մըն ալ անկե, որուն 71-րդ էջին վրա՝ պատերասզմի նախընթօրին ինձ ուղարկած պատվանշանով³² կենդանագրիդ էի դրած: Իսկ 1915-ի փորձանավոր³³ Տարեցույցիս մեջ (որուն համար տարի մը բանա պառկեցա և քիչ մնաց որ կախվեի 20 հնչակյաններուն հետ)³⁴, էջ 295, ՚! տողնոց հատված³⁵ մը կար քո մասիդ: Մե՛ղք որ Թալեադի բարբարոս կառավարու-թյան ձեռամբ փճացան անոր ամբողջ օրինակները: Եթե չունիս այդ տարվանս, կաշխատիմ տեղե մը ճարել, հին կամ նոր՝ հատ մը ձեռք ձգելով:

* շվեյցարական ֆրանկ:

** ամեն անգամ, միշտ:

*** նախանձողներու:

**** պայթարելու, դեմ-դեմի հանելու, մարտնչելու:

11. Թուղթը վերջակետելու պահուս, ուրկե ուր, 19 տարի ետ ոստում մը կընե միտքս հանկարծ, կանխահաս ծիրույթիս խրխլիկ հին սանդուղը քնննելու համար, թե՛ հակադարձը, երջանիկ աղավնետանս երբեմնի թառը տեսնելու համար անդրանիկ տարեգիրքիս 253-րդ էջին վրա³⁶: Միրո սաղմոսին առաջին փոխասացութունն էր այն՝ զոր այնքա՛ն անկեղծ էիր ոգնր ականջս ի վար, երբ ես իմ լուսինս մեղրել էի սկսած և Հավիտյան-ին գիտակցութեան անդրադարձած՝ խնդակցական սողերուդ շարքին: «Անիկա (զավակը)—կըսէիր դուն հոն—շարունակութունն է, հավերժացումն է սիրո երազին: Օր կուգա որ երկու սիրողներն ալ, լուռ, աչքերնին վար կառնեն, ընկճված, մտածկոտ ու տխուր: Այդպիսի վայրկյաններու համար է որ երրորդ անմեղի մը ճիշը պետք է՝ նայվածքները իր վրա կապելու, և իրմե անդին՝ զանոնք սիրված հավիտյանին ուղղելու համար»: Ես այդ «ընկճված, մտածկոտ ու տխուր» պահերն անհազի՛ն ունեցա 1915-ի գարունն ասդին. և եթե վար առի աշխ՝ արցունքս ծածկելու համար էր, իսկ երս վեր առի զայն՝ ազատութեանս հորիզոնին նայելու համար էր: Այդ հորիզոնը նորեն մթնեց՝ կեսիս և «երկրորդ»-իս բացակայութեամբ³⁷: Թո՛ւյլ տուր, որ անգամ մ՛ալ կարդամ Հարութուն³⁸ քերթվածդ, ես ալ շեմ գիտեմ՝ նսյվածքս ո՛ւր կապելու համար, դեպի Զատի՛կը³⁹ թե Մոազատիկը⁴⁰ կյանքիս, իմս՝ դեպ ի դանդիւր* դամբանիս...

Քույր մշտանվեր
Թե՛Ո՞րիկ

2. Գ.—Ներփակ քարտ մը հին մտերիմեդ:

2

Գործու՛, 19 հունիս 1923

Թանկագին բարեկամս
Տիար Ռուբեն Որբերյան
Փարիզ

1923-ի Տարեցույցիս տպագրութունը մոտ էր ավարտելու, երբ նամակնիդ ու քերթվածնիդ ստացա, ձեր և ձերայնոց խմուսնկարին հետ, որունցմով վերջակետեցի Տարեցույցիս գեղարվեստական բաժինը, գրականը փակված ըլլալով²:

Քերթված ու նամակ լի էին տխուր հուշերով: Բանաստեղծի ձեր հոգին սպունգի պես ծծեր էր հուսահատութեան «սև կաթը», այնքան հորդահոս քամված կրկնակ եղեռներու (Անատոլուի և Զմյուռնիո) ստինքեն³: Ա՛լ արցունք չունինք՝ նոր զոհերու վրա ցողելիք, մելանիս ալ ցամքած է՝ վայրավատին** Հայութեան անհուն թշվառութեան արձագանգ ըլլալու համար: Լուզան վերջին անգամ դամբանականը կարդաց մեր դատին. դարերու հոգեվարքե մը վերջ՝ դիվանագետ-բժիշկներու թույնովը անէացած այդ մեռելն ալ թող թաղվի անպատան, և երեկի մեծեղեռն դահճապետը՝ Թուրքիան թող սուքա*** այսուհեև իր դուրին հաղթանակներուն և քրեիքուր հանցանացը

* Մթութուն, խավար
** Ցրված, ցանուցիր, խարխլված:
*** Բառարաններում չգտանք բացատրութունը, Հավանարար ույուք (հով) բառից կուզված ստորոգյալ է՝ հով փշի, սյուքի պես գուրգուրի՝ իմաստով:
172

թողութիւն շնորհելուն վրա. խաչված Արդարութիւնը թող իր գատի՛կն ալ շունենա. սակայն Հայուն անեծքը որ հիմա ու վա՛ղն ալ հրաբորբ է՝ Վեսու-ֆեն ավելի, պիտի ընկելոզե անվրեպ Եվրոպայի բոլոր Սողոմ-Գոմորները, և Լորբեն⁴, Հարտինկներեն⁵, Մուսոլինիներեն⁶ ու Բուանքառներեն⁷ ոչ մեկ Ղովտ պիտի վրիպի անոր համայնածուխ բոցերեն: Ասիկա մեր պապերուն հավատքեն ժառանգած միակ միաթարութիւննիս ըլլա թող, և աշխարհ նորեն գիտցածին պես շարունակե իր ճամբան:

Զկրցի ձեզ գրել ժամանակին, վա՛սնզի Վիսպատըն⁸ մեկնումնիդ իմացուցեր էիք: Արդեն ամիս մը վերջ ալ Տարծցուլցս կավարտեր. հրդեհեն գույք փախցնողի մը պես՝ Սթանպուլի շտիբըն գիրքէրս⁹ արտասահման կուղարկելի հապշտապ, ետենն՝ ինքս տնձամբ. վասնզի Զմյուռնիո աղետը մուխերնիս մարեր էր մեկենիմեկ, և անօրինակ անդոհի* մը տակ՝ շամեն ոք իր գըլխուն ճարը կանդաճեր**.

Օրինակը վարակիչ եղավ. շուշս նայեցա. ո՛չ խմբագիր էր մնացեր, ո՛չ ուսուցիչ, ո՛չ կուսակցական, ոչ ուլ առևտրական: Ու սպրդելով Պոլսո որբանոցներեն հապուրակի*** պարպված մեր որբերուն հսկա կարավանն ենրս, մտա շոգենավ 29 նոյ. 1922-ին: Բութ, ձյուն ու անձրև դաշնակցեր էին նույն օր՝ զմեզ պատահասելու կամ գուցե մեր անանձագիր խույսը դյուրացնելու համար:

Ինկանք Հունաստանի այս հեռավոր կղզին¹⁰ և յոթ ամիսե ի վեր անմը-ռունչ կը տանինք մեր նոր խաչակրութիւնը՝ որ Տաճկին քսորեն մեծ տարբերութիւն շունի: Նիւ-իւք-ըլիֆ-ի¹¹ որբանոցին մեջ, իբրև ուսուցիչ, շըրջապատված ենք ամերկացի պետերն՝ որոնք մարդասիրութիւն շոշորտը շունին, և ուսուցչի ու որբերու հանդեպ կը վարվին այնպես, որպես անբաններու: Մանր պաշտոն, հահախ մեր արժանապատվութիւնը ճանկոտող քմածին որոշմանց գլուխ ծոռմ, շմեռնելու մը շափ թոշակ՝ օրական 5՝ տասի փոխարեն (առանց հաշվելու հերթապահութիւննիս), մեկ կողմե թեթևացում պաշտոնեութիւն շարքերե: Ահա վիճակնիս: Բարձրագույն կարգերու տղոց կուտայի տոմարակալութիւն, աււար[ական] թվարանութիւն, գրաբար. շարադրութիւն և գր[ական] վերլուծում: Կուտայի կըսեմ, վասնզի հիմա բարձրագույն կարգեր շունինք, 14-են վեր բոլոր տղաքը, 400 հոգի, նավ լեցուցին ու պախրեի նման փոխադրեցին Գավալա¹², հոնկե ալ Տրամա¹³, ծխախոտի դաշտերուն մեջ չէ թե աշխատցնելով, այլ լքելով զանոնք հոն՝ իրենց բախտին: Ինչե՛ր կային մեջերնին, ինչե՛ր, վաղվան Հայութեան (հայու սիրտ, որ տակավին կը բունա****), պարձանք, որոնք գացին իսկ և իսկ փճանալ և ուշ կամ կանուխ ապազգայնանալ: Իրենցմե նոր հասնող նամակներ՝ ուղղակի, անվանս ու պաշտոնակիցներուս՝ ահավոր գույներով կը պատմեն տղոցը դժնդակ կացութիւնը: Դեռ հույս ունին շատերը, որ ազգը (ո՞ր ազգը) օգնութեան ձեռք պիտի կարկառե իրենց, եթե լսե իրենց ալ: Վերջին անլուր Գողգոթան: Մենք, մեր խոռված խիղճը մասամբ խաղաղեցնելու համար՝ բռնեցինք Փարիզի ազգ[ային] պատվիրակութեան նախագահին հղեցինք այդ նամակներուն պատճենները, ձեռամբ՝ իր հրապարակային քննադատութեանց երեսն վտարյալ ուսուցիչ և ազգ[ային] երեսփոխան

* վշտի, ահի, մտտանշութեան:

** մտածում էր, խոկում էր:

*** հանկարծակի:

**** Բուն դնել, հարմարվել, տեղավորվել:

պրն. Արշակ Ալպոյաճյանի¹⁴, իսկ բուն օրինակները զրկեցի նյու-Յորք պրն. Միհրան Գարակոյոյանի¹⁵ ընդարձակ նամակով մը: Այս վերջինը ն. Ս. -րըլիֆի կենտրոնին անդամ ըլլալով, իր հաշու սրտովը թերևս կը շարժի, և մնացյալ որբերը որպեսզի չցրվին՝ կարգադրութիւն մը ընել կուտա:

«Ճինիւրը»* կարգեն քանի մը հոգի կրցանք փրկիլ՝ մեկէնասնհրու հովանավորութեան հանձնելով զիրենք, ուսումին կատարելագործելու համար: Գաղտնի պահած ունինք հատ մըն ալ, 19-ամյա Երեմիա Նարեկյան Օրտուցին¹⁶ որուն, նկարչութեան մեջ ցույց տված արտակարգ տաղանդը ապշեցուցած է ամենքս: Եթէ սանկ ձեռք մը դրվի վրան և քանի մը տարի Եվրոպա նկարչութեան հետևի՝ Պոլսո գեղարվեստիցեն ընդհատված այս պատվական երիտասարդը, Մախոխյաններու¹⁷ և Ֆեթվաճյաններու¹⁸ համբավին կը հասնի օր մը անսպասու: Ասիկա դատաստանն է նոյնիսկ հելլեն նկարիչի մը որ կղզիիս մեջ կը գտնվի: Կարելի՞ է արդոյք հուսալ թե զինքը հուլսով օրորելնիս և հոս ծվարած պահելնիս իրեն համար փրկութեան ելքի մը կը հանգի: 400 տղա, բոլորն ալ ուսումնատենչ, հետվեցան 4 հովերուն, ու հիմա մեկ հատին վրա գուրգուրալ՝ ճիտերնուն պարաքը կը սեպեն մեղ. նման զրպանք ծակ ուսուցիչներ:

Անցյալ օր, Լութրարի:⁹ գտնվող՝ հրաժարյալ ուսուցիչ Լ. Լսաճանյաւսեն²⁰ նամակ մը հասավ հոս, ձեր «Ովասիս»-են հատված մըն էր ընդօրինակիր. «ՄԲՄՅԻՐՍ անհոն է Լրաճներուս, հուլսերուս ու բաղձանքներուս նման: Անպատի անկյունես կը գուշակեմ ու կզգամ անմիջական պետքը մտերմական ձեռք մը երկարելու մեր այն երգիչներուն ու գրչի աշխատավորներուն որ հրաշքով մը զերծ մնացին համայնակուլ սարսափներեն, և որ սակայն հայուն փառքն ու անմահութիւնը կը քնարերգեն, ապրելով հանդերձ դժնդակ կյանք մը՝ մահերեն դառնագույն»: Եթե այս հատվածեն անմիջապէս վերջ հիշատակված անձերեն ոմանք, ապրելով հանդերձ դժնդակ կյանք մը, մահերեն դառնագույն, և շարունակելու՞ դեռ ապրիլ այս դժնդակ նրժոյց-հեռութեան ծոցը, — մտերմական այդ ձեռքին երկարումեն գուրկ մնացին, պիտի երանի՞ն զձեզ, եթե վաղվան Հայութեան վերագարնումին պատրաստվող նարեկյան մը փրկեք....:

Զերդ անայայլ սիրով
ԹԵՆՈՒԻԿ

3

Գործու. 30 Ապրիլ 1924

Ազնիվ Որբերյան,

Նախ՝ շնորհակալութիւն 1924-ի Տարեցույցիս մեջ երեցած հոգվածիդ համար¹: «Կոչնակ»-ի թիվերեն միւռյն մեջ² հիշատակեր էիր զիս «աշխարհական-վանական» կոչելով, ու բնավ չէիր սխալած այդ որակումիդ մեջ: Մե՛ղք որ հակառակ անշեջ տքնասիրութեանս՝ հեռու եմ ամենաճոխ մատենադարանես, այսինքն ձեռքս ոտքս կապված: Այս վերջին անդամս տառական իմաստով ալ նույնն է, կտորած ըլլալով զայն 5 նոյ. 1923-են ի վեր, և հիմա անթացուպերով կը քալեմ³: Բայց ետ չեմ կեցած բնավ մտադրութիւնես. ցմահ պիտի հրատարակեմ Տարեցույցս, հովը եթէ նույնիսկ զիս Չինիմաշուն* ալ քշե:

* Անգլ. junior (կրտսեր) բառն է, զպրոքը կարգերի էր բաժանված և բառն ունի նաև՝ կրտսեր դասընթացի ուսանող (աշակերտ) իմաստը:

** Չինաստան:

* * *

Մեծ հանդիսութուններով տոնվեցավ հոս և հին ու նոր Հունաստանի զանազան անկյանց մեջ պաշտելի Պայրընիդ* հարյուրամյակի ցնծութունք. անգլ[իական] տորմիդ մըն ալ մեր ջուրերը այցելեց ու գնաց Միսոլոնկի⁴: Պիտի դնեմ մեծանուն քերթողին՝ 1. Լիակատար կենսագրութիւնը⁵, 2. «1824—1924» վերտառութիւնը⁶, 3. Միսոլոնկիի մեջ կատարված հանդիսութիւնաց ամփոփ նկարագրութիւնը⁷: 4. Կասթուրի գյուղը (Գորֆու) Քայզերյան պալատան շքեղ պարտեզին ստվերոտ մեկ անկյունը զետեղված իր արծանը (մարմարյա), աթոռի վրա, ոտքերուն տակ պիրքեր, դեմքը խոհուն ու երազկոտ, ու վայրահակ: 5. Քենե գրվածք մը կամ ֆերթված մը անպատճառ⁸: 6. Տիար Կամսարական Պայրընի վրա հրաշալի բան մը⁹ գրեր է եղեր՝ զոր չէ տվեր Հակոբ Տեր-Հակոբյանի, գրքիս Պոլիս սպառու մը շվտանգելու համար: Այդ վախը շունիմ բնավ, քանզի Պոլսո մեջ գրքիս vente-ը** նշանակութիւն չունի, բավ է, որ Տիար Կամսարական բարեհաճի շնորհել ինձ, քու ազդեցիկ բարեխոսութիւնները՝ հիշյալ գրութիւնը: Քեզ տեսնեմ, հաջողեցուց այս խնդրանքս. մանկութենեդ ի վեր պաշտած Պայրընդ պետք եղած կերպով պանծացուցած ըլլամ գրքիս մեջ: Եթե բացարձակապէս անկարելի դառնա (ինչ որ չեմ հուսար), ուրիշ գրվածք մը փրցունեիր իրմե: Անցյալ տարի (1924), հակուակ խոստումին՝ փախցունք ըրավ. այս անգամ չազատիր ձեռքես, քանի դո՛ւն կաս հող: Սա դժնդակ պանդխտութիւնս ու հաշմանդամ կացութիւնս մեջ ի՞նչ բան ինձ համար մխիթարական՝ քան գրչի եղբայրներուս ուղղյալ սրտագին հրավերներուս ընդունելութիւնը: Մի՛, Ռուբէն. ճիտիկս ծուռ ձգեր, արդեն շատ ծոած է ան 1915-են և 1922-են ի վեր....:

* * *

Պայրընի անվամբ գյուղ մըն ալ կա հոս, Վիոն կըսեն տեղացիք, քաղաքն 1½ ժամ հեռու, գեղեցիկ բլուրի մը վրա: Հոն կը կենա Պայրընի բնակարանը՝ զոր գյուղացիք պարծանոք ցույց կուտան, մեղք որ սրունքիս պատճառով կարելի պիտի չըլլա մինչև հոն երկննալ՝ այդ պատմական տունն ալ լուսանկարել տալու համար:

* * *

Կացութիւնս հոս անտանելի է. իբր «խուրատա» ոք կը պաշտոնավարեմ լորտ Մեյրոս Ֆրնտի անգլ[իական] որբանոցը, որ քանի մը ամսին պիտի փակվի որբերն մեկ մասին Գանատա*** մեկնումովը, սյուս մասին ալ Հայաստան փոխադրութիւնները: Այնուհետև... համբարձի զաշս իմ Տարեցույցի իմում, ուստի եկեցցե ինձ յգնութիւն:

Քույդ անայլայլ սիրով՝
ԹԵՆՈՂԻԿ

2. Գ.—Մի ուշացնիր նամակդ, որքան ալ առողջական վիճակդ քիչ ներեքեզ՝ շուտ պատասխանելու համար: Հավանական է որ գիրքս Ամերիկա տպվի. ճամբու ահագին հեռավորութիւն, ժամանակի սղութիւն, գրական բաժնին՝ գրքիս սկիզբները գտնվիլը, ավելցո՛ւր այս ամենուն վրա ընդոծին անհամբերութիւնս ու ըմբռնած կըլլաս կացութիւնս: ՆՈՒՅՆ

* Բայրոն:
** վաճառք:
*** Կանադա:

Ազնիվ Սիրելի,

Ի ձեռին ունիմ ամսույս 1 թվակիր նամակդ՝ պահարանին զաղփաղփուն* կազմեն և մեջի թուղթերուն շատութենեն՝ շորս դիեն պայթած: Բարեբախտաբար պակաս բան չգտա: Դուն իմ տեղս եղիք հիմակ ու մի ըսեր տեսնեմ. «Աս ո՞ր հով փչեց...»: Ցավերդ ու տառապանքներդ 6 տարի մոռացուցած էին «թափառական Թեոդիկ»-ը՝ որ չափեն ավելի մեղադրեց զքեզ սառ վերաբերումիդ համար: Մարդ իր շատ սիրածին դեմ շատ կը վշտանա: Կրնաս տատանած ըլլալ երկու աշխարհներու կոպարներուն** վրա, այցելած իսկ ըլլալ Տանդեի դժոխքը, սակայն այդ 5 սև տարիներուդ մեջ քիչ շատ երկացար ուրիշ սիրականներու: Եւ խաթերնին խոշ ըրիր, դարիքս միայն ուզեցիր թողլիք ընել, իս որ այդչափ ատեն այնքան կարոտ էի մտերիմ ձայնի՝ անվերջ սուգիս ու տաղտապումներու*** մեջ: Կը հավատամ որ կը նեղվեիր սրունքեդ և հոգացավերեդ, բայց շոր խոսք մը կըրնայիր խավրի**** բաց թուղթի կտորը մը վրա, նույնիսկ մեկ տող: Ատենականը՝ քեզ նման բազմիցս չափեցի, Ռուբեն, 1922-ի սկիզբեն ի վեր Արշակուհիս Լեյզիի ձյուններուն հանձնելես՝ մինչև Հոռմի կղզյակ մը 3 տարի պատներեսին մնալես՝ և հոն սրունքիս մեկը վրա տալես ի վեր, բայց չմոռցա զքեզ. վասնզի հեռավոր սիրելիներու հետ խոսիլը միակ սիոփանքս եղավ ինձ համար, նման գրչի լուռ պարապմանցս, որոնք արգիլեցին զիս մաւամբ ներսիդիս խոցերուն շատ անդրադառնալ: Կանչվեցա հոս՝ ինձ նման Պուստ ջուրերեն փախչող պատրիարքին՝ կողմե, որ ինձի ազատ ատեն տված է հիմա՝ տարեցույցովս ալ զբաղելու, տոմարական զբաղումներես դուրս: Որքան կը բաղձայի որ կյանքիս վերջալույսն անցներ թիվե և հաշիվե գերծ. հերիք չէ՞ր 30 տարվան տառապանքս այդ թնճուկներուն մեջ: Դատապարտված եմ եղեր գլուխս հանդեպնելիք բարձի մը և պատառ մը հացի փոխարեն՝ նորեն հաշիվներու մեջ մաշելու: Ապրած կյանքս հոս հին տարիներու անապատականներու կենցաղեն չի տարբերիր բնավ: Ութ ամսե ի վեր ոչ քաղաքը տեսած եմ, ոչ ալ քաղաքացին. 4 պատի մեջ օր ցբուն բանտված մը, աշոցքը***** քիթիս ու գրիչը մատներուս մեջ: Կը գովեն ու կը կենան պաշտոնակիցներս կղզիիս վերջալույսները. շենք շնորհք հեղ մը գոնե վայելած չունիմ: Ծանճ շանցներ մեր ամայի կայքեն, բացի հեռավոր պողոտային երթուղարձող... համբակյալ... շորիներե: Այս քարքարուտ, անբեր և անջրդի տարածութեան վրա ահա բ՛րեր թափեր են Մելգոնյան բարերայիներու կարմիր ոսկիները, որպեսզի որբերնիս...: վայրենանան: Այո, Ռուբենս, «սեղմենք շարքերը, քանի մը հատ մնացինք», բայց սեղմելուն խելքս չի հասներ, այնքան սեյրեկցած ենք այլևս: Իցի՛վ թե նոր սերունդը մնար մենե վերջ կուռ շարքերով ու մեզի պես չճաչե: Ուրախ եմ ի սրտե հին ուժերդ վերագտած ըլլալուդ: Մեզք մ: ապսպրանքդ պիտի չկրնամ կատա-

* բարակ, թույլ, թափանցիկ:

** սահման, տրորված, քարացած ճանապարհ:

*** նեղսրտություն, զրկանքներ:

**** ուղարկել:

***** ակնոց, պենսե:

րիլ՝ Ս. Մակարի բարձունքը մտադիլու համար: Ձի քո՝ է կարողութունն և... սրունք: Գալով գրոսթեանցո՞՞, այսօր իսկ ճամբար կը հանեմ զայնս, պատվիրելով փորձերս նայող... Լ. Բաշալյանի՞՞ որ ուշադիր ըլլա. արդեն մաքուրի քաշած եմ: Ներե նոր կրանիթ-դ (granit) գրանիտ-ի տառաշրջած ըլլալուս, բաղդ-ը՝ բախտ-ի, դանդաջուն-ը՝ դանդաշուն-ի, sursum cordac*-ն՝ sursum corda-ի, ալեփառ-դ՝ ալեփառ-ի, («անարժանները» հապավեցի, զի գիրքս Պոլիս ալ կը մտնե), կապոցը (կեող-պաղը ըսել չէ, այլ ծրար, զայն ալ ըրի կապ պարզապես), Տարտատել-դ՝ Տարտանելի, apre=âpre**, d'ou=d'ou*** բունագուրկ=բունագիրկ, (անվանս գովեստը հապավեցի): Բժիշկդ՞ 24-ի հատորիս մեջ կենսագրած էի հեղ մը: Քենե գատ ո՞վ որ ալ ըլլար իր մասին կրկին խոսող՝ շէր դներ կրկին: Կըսե՞ս իրեն այժմեն, որ 28-իս համար գրեր անպատճառ ՔՆԱՅԲԻ՞՞ և ջրաբուժության վրա:

Քույդ անայլայլ սիրով՝
ԹեՈՒԿԻ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

- 1 Թեոդիկը արտրովի է 1916 թ. ապրիլին: Աքսորից վերադարձել է 1918 թ. պատե-րազմի ավարտից անմիջապես հետո:
- 2 Նկատի ունի Աֆրիկան: Ինուբեն Որբերյանը շուրջ 17 տարի (1904—1920 թթ.) ապրել է Ֆրանսիական Սոմալիի Ջիրուդի քաղաքում:
- 3 Այդ գիրքը Որբերյանի «Ովասիս» ժողովածուն էր (Փարիզ, 1920 թ.):
- 4 1922 թ. Տարեցույցի մեջ «Ովասիսի» մասին գրախոսություն չկա:
- 5 Այդ հուշագրությունը վերնագրված էր՝ «Բանտի և արտորի տարիներ»:
- 6 Օտյանի վկայությամբ՝ Տեր-Ջորի կամուրջով անցած 300 հազար հայերից «միայն 1500 կիներ և որք տղաք ողջ մնացած են»: Սպանված մտավորականների թիվը մոտ 500 է:
- 7 Օտյան Երվանդ (1869—1926)—գրող խմբագիր:
- 8 Անտոնյան Արամ (1875—1951)—գրող, խմբագիր, հրապարակագիր:
- 9 Շամտանեյան Միխայել (1874—1926)—պատմաբան, հրապարակախոս, խմբագիր:
- 10 Խաչատրյան Ա.—Կեղոռնական վարժարանի տեսուչ, պրոֆեսոր, նշանավոր պատմա-բան, մանկավարժ, որ արտորից հետո անցավ Երևան:
- 11 Տեր-Հակոբյան Հակոբ (1881—1960)—հրապարակախոս, խմբագիր:
- 12 Թեոդիկ (ձեզվեճյան) Արշակունի (1876—1922) Թեոդիկի կինը, գրասեր, մշակութա-յին-հասարակական գործիչ, հեղինակը «Ամիս մը Կիլիկիա» գրքի (1909), որ գրեց Ազանայի շարդերից անմիջապես հետո: Արշակունիի մեծ օգնություն է ցույց տվել Թեոդիկին՝ «Ամենուն տարեցույցի» հրատարակության գործում:
- 13 Թեոդիկ Վաճազն—Թեոդիկի միակ զավակը:
- 14 «Նուշարձան Ապրիլի տասնմեկի», 1919 թ., Կ. Պոլիս:
- 15 «Գողգոթան» ժամանակին շտապագրվեց: Թեոդիկի մահից հետո ձեռագիրը հայտնվեց Երուսաղեմում: Տասնամյակներ հետո Ներսես Ժ. վրդ. Բախտիկյանը հրատարակեց «Գող-գոթա»-ի 1-ին հատորը: «Գողգոթան» Շահնուրի վկայությամբ «սև լաթե կազմով հինգ տետ-րակների» մեջ էր գրված: Եվ ինչպես՝ «Ամենուն տարեցույց»-ում է ծանոթագրված՝ շուրջ 1000 մեծագիր էջերից էր բաղկացած, բազմաթիվ լուսանկարներ էր ունենալու:

* Լատինական դարձված: Վշտակիր սիրտ, որ գործածվում է իրեն կողմն ուղղված սրտին, ամուր մնալու, վշտին դիմանալու, սրտից վեր բարձրանալու, սառը դատողությամբ խորհելու իմաստով:

** դառն, կծու, տոխպ, անտանելի (ֆրանս.):

*** որտեղից (ֆրանս.):

16 Թեոդիկի նորավեպերի առաջին փունջը առանձին գրքով լույս է տեսել 1912 թ., «Կաղանդ» խորագրով: Երկրորդ փունջը լույս չի տեսել: «Ամենուն տարեցույց»-ի մեջ ծանուցված է, որ հրատարակության պատրաստված են պատմվածքների երկու գրքեր՝ «Տազավար» և «Աերոսիրտ»:

17 Սկսած 90-ական թվականներից Թեոդիկը հասցը վաստակել է տոմարակալի, հաշվակալի (հաշվապահ) աշխատանքով:

18 Հյուժախտից քայքայված կնոջը՝ Արշակունուն 1920 թ. Թեոդիկն ուղարկում է Շվեյցարիա, լեյզիների սանատորիան, որտեղ մնում է շուրջ երկու տարի:

19 Մոնտեյ-բաղաք Շվեյցարիայում: Մոնտեյում ձեվահրճյանները ունեին աղամանդի (կորունդի) նշանավոր գործարան: Կա նաև հիմա:

20 Նեվշատնի—փոքրիկ քաղաք՝ նույնանուն լճի ափին (Շվեյցարիա):

21 Օշական (Քյուֆենյան) Հակոբ (1882—1948), գրող, քննադատ, գրականության պատմարան:

22 «Ճակատամարտ» (նաև «Արդարամարտ», «Արիամարտ») — օրաթերթը (դաշնակցության օրգանը) հրատարակվել է Պոլսում, 1909—1915 թթ., ապա վերսկսվել է 1918 թ. նոյեմբերից: Թերթին հաճախ թղթակցել է նաև Օշականը: Զկարողացանք պարզել, թե այս հոդվածը ո՞ր համարում է տպագրվել:

23 Հովհաննես Ասպետ կամ Օճեիկ Զիֆթե-Սարաֆ (Հովհաննես Արիսողովյան) (1874—1930), գրող:

24 Զոյիլ կամ Զոիլու—չար և մանրահնդիր, միշտ վատարանող քննադատ: Ճարտասան, փրիխոսփա և գրական քննադատ Զոիլը ապրել է 4—3-րդ դարում, մ. թ. ա., Հունաստանում:

25 Լ. Յ. Դ.—Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը, որի անդամ դասնալու հրավերը մերժել է Թեոդիկը:

26 Ըստ երևույթին, ոճական արտահայտություն է, որ նշանակում է, թե Քրիստոսի տառապանքը կրած մարդը մոռանում է կյանքում ծպտալ:

27 Զեռազ Մինաս (1852—1929), հրապարակախոս, խմբագիր, մանկավարժ:

28 Դուրյան Եղիշե (1860—1932), հոգևորական գործիչ, բանաստեղծ, բանասեր:

29 Թեֆեյան Վահան (1878—1945), բանաստեղծ, խմբագիր:

30 Պարթևան Սուրեն (1876—1921), գրող, հրապարակագիր, խմբագիր:

31 1914—1918 թթ. պատերազմի ժամանակ Զիրուդիի հայերից շատերը կամավոր մղտնում են ֆրանսիական բանակի շարքերը: Արևմտահայաստանի ազատագրության հեռանկարով ոգևորված՝ կամավոր է դառնում նաև Որբերյանը: Որբերյանը քննություն հանձնելով ստանում է տասնապետի աստիճան: Սակայն տեսողության տկարության պատճառով նրան ռազմաճակատ չեն տանում: Նրան հանձնարարվում է մարզել նորակույիկների (Մանրամասնություններ տե՛ս՝ «Ովասիս», էջ 217—236):

32 Զիրուդիի վաճառականությունը մատուցած ծառայությունների, ֆրանսիական առևտրին օժանդակելու համար ֆրանսիական կառավարությունը 1914 թ. Որբերյանին պարգևատրում է «Նիշան էլ Անուարի» ասպետական պատվոնշանով:

33 1915 թ. Տարեցույցի օրինակների մեծ մասը թուրքական իշխանությունները հավաքեցին և այրեցին: Թեոդիկին և տպագրիչ Մ. Հովակիմյանին էլ բանտ նետեցին (1915 թ. ապրիլից մինչև 1916 թ. ապրիլը): Պատճառն այն էր, որ Տարեցույցում (էջ 11) տպագրվել էր 1897 թ., Անզիլայում Չեստր քաղաքի արվարձաններից մեկի՝ Հավարտրնի եկեղեցում տեղի ունեցած հանդիսավոր մի արարողության նկարագրությունը և ելույթների տեքստերը: Կար նաև Վիլյամ Գլադստոնի (Անգլիայի պրեմիեր-մինիստր 1860—80 թթ.) ելույթը, որի մեջ խոսում էր Թուրքիայի բարբարոսական արարքների և ժողովրդի տառապանքների մասին: Մեղադրում էին նաև արևելահայ գորավարների մասին նյութեր տպագրելու համար:

34 1915 թ. հունիսի 15-ին Կ. Պոլսի Սուլթան Բայազետի հրապարակում կախաղան հանվեցին 20 հնչակյան գործիչներ:

35 «Թուրքեն Որբերյանի ասպետական աստիճանը» վերնագրով լուր:

36 Անդրանիկ համարը լույս է տեսել 1907 թ.: Այստեղ տպագրված է Որբերյանի 1907 թվակիր մի նամակը՝ գրված Թեոդիկի ամուսնության առթիվ: Վերնագրված է. «Նեղակցական նամակ գրի: Երբոր մը ամուսնութիանն առիթով» (էջ 253): Բերված տողերը այդ նամակից են քաղված:

37 Նկատի ունի կնոջը և որդուն, որոնք գտնվում էին իրենից հեռու, Շվեյցարիայում:

38 «Հարություն» վերնագրով 1915 թվակիր բանաստեղծության մեջ (տե՛ս, «Ովասիս», էջ

231) Որբերյանը խոսում է իր կարոտի ու սպասման տազնասպների մասին, խոսքն ուղղելով իրենից հետո՝ Իզմիրում գտնւոյ տղային՝ Հարությունին, որդուն սպասման տենչը դարձնելով Հայրենայց ու Հայության հարության խորհրդանիշ:

39 Որբերյանը այս քանաստեղծութիւնը գրել է Զատիկ (Քրիստոսի Հարության) օրը, որը դարձաւ խորհրդանշային իմաստ ունի:

40 Սովորաբար Զատիկ (Հարության) տոնը նշվում էր մարտի 22-ից ապրիլի 25-ը ընկած որևէ կիրակի օր, կապված լուսնային հաշվումների հետ: Սակայն երբեմն այն խախտվում էր, փոխվում էր օրը: Հենց դա էլ կոչվում է Մոազատիկ: Այդ կապակցութեամբ շատ վեճեր են եղել սկսած 3-րդ դարից: Ի վերջո որոշվել է Մոազատիկ չտոնել: Քեոդիկն ուզում է ասել, թե իր Մոազատիկը (Հարությունը) այլևս չի լինելու, ծոազատիկ է, որ չի տոնվում:

2

1 Կորֆու—քաղաք համանուն կղզու վրա, Հունաստանի արևմտյան մասում:

2 Որբերյանի նամակը, «Անվերադարձ» քանաստեղծութիւնը և ընտանիքի լուսանկարը գետեղված են 326-րդ էջում՝ «Հափելված գրական բաժնին» վերտառութեամբ:

3 Ակնարկում է 1921 թ. Ֆրանսիացիների կողմից Կիլիկիայի լքումը, տեղի ունեցած ջարդերը, ապա Իզմիրի 1922 թ. աղետը, երբ քեմալականները դաժան հաշվեհարկ տեսան քրիստոնյա բնակչության հետ, սպանեցին կամ աքսորեցին Անատոլիայի խորքերը, հրդեհեցին քաղաքը:

4 Լոբր—չկարողացանք անձը պարզել, ըստ երևույթին եվրոպայի պետական գործիչներից մեկն է եղել:

5 Հարգինգ Ուոբեն (1865—1923)—ամերիկյան ռեսկրիտն պետական գործիչ, պրեզիդենտ 1921—23 թթ.:

6 Մուսալինի Քեքոն (1883—1945)—իտալական ֆաշիզմի պարագլուխը:

7 Պուանկարե Ռայմոն (1860—1934)—ֆրանսիական բուրժուական քաղաքական գործիչ, պրեզիդենտ, պրեմիեր-մինիստր:

8 Վիսթադեն—առողջարանային քաղաք Գերմանիայի հարավում: Վիսթադենում Որբերյանը եղել է 1922 թ. հոկտեմբեր-նոյեմբերին:

9 Քեոդիկն ունեցել է շատ հարուստ, ինչպես Շահնուրն է հիշում՝ «փառավոր գրագրան»: Նրա սենյակում գրքերը «կը բարձրանային մինչև ձեռքը»:

10 Կորֆու կղզու մասին է:

11 Նիր-իսթ-րիլֆ—«Մերձավոր Արևելքի նպաստամատուց» ամերիկյան կազմակերպություն:

12 Կավալլա—ոչ մեծ քաղաք Հունաստանի հյուսիս-արևելյան մասում:

13 Դրամա—քաղաք Կավալլայից քիչ դեպի հյուսիս:

14 Ալպոյանյան Արշակ (1879—1962)—նշանավոր պատմաբան, բանասեր:

15 Գարալիոյան Միհրան—Ամերիկյան գործարանատեր (Պլսում կրթութուն ստացած), Հուարդ Գարալիոյան որբարևնա կազմակերպության հիմնադիր:

16 Սոդալ—նավահանգստային քաղաք Քուրթիայի հյուսիսում, Սև ծովի ափին, Տրապիզոնի մոտ:

17 Մախոյան Վարդան (1869—1937)—հայ նշանավոր ծովանկարիչ: Յուցահանդեսներով հանդես է եկել աշխարհի բազմաթիվ քաղաքներում:

18 Ֆեթվանյան Արշակ (1866—1947)—հայ նշանավոր գեղանկարիչ-բանասեր: Յուցահանդեսներով հանդես է եկել Պետերբուրգում, Հռոմում, Փարիզում և այլուր:

19 Լուբրաֆի—քաղաք Հունաստանում:

20 Էսանճյան Լևոն (1883—1935)—բանաստեղծ, լրագրող, քննադատ, մանկավարժ:

3

1 1924-ի Տարեցույցում տպագրված հոդվածը կոչվում է «Աղետալի մոռացումը (Ճիպուղիի հիշատակներ)», էջ 56: Տպագրված է նաև Որբերյանի և Մերուժան Պարսամյանի լուսանկարը (էջ 62):

2 «Հայաստանի կոշակ»-ի այդ համարը չգտանք:

3 1923 թ. նոյեմբերի 5-ին պատահական դիպվածով կոտրվում է Քեոդիկի ոտքը, որի պատճառով շուրջ մեկ տարի հենակներ է օգտագործել:

4 Միսոլունգի—քաղաք Հունաստանում: Բայրոնի մահվան հարյուրամյակը 1924 թ. ապրիլին տոնվեց ամբողջ Հունաստանում և հատկապես Միսոլունգիում: Ինչպես հայտնի է, անգլիացի հանճարեղ բանաստեղծը, ոգևորվելով թուրքերի դեմ հույների մղած ազատագրական պայքարով, 1923 թ. մեկնեց Հունաստան և միացավ հույն ապստամբներին: Բայրոնն իր միջոցներով գինեց մի ուսգմական նավ՝ 500 զինվորներով և անձնակազմ մասնակցեց կռիվներին: 1824 թ. ապրիլի 19-ին նա չերմախտով հիվանդացավ և մահացավ Միսոլունգի քաղաքում: Հունաստանը ազգային սուգ հայտարարեց այդ օրը:

5 Բայրոնի կենսագրությունը գտնում ենք «Ամենուն տարեցույցի» 1925 թ. հատորում, էջ 319, վերնագրված է «Լորտ Պայրոն և իր մահվան տարեդարձը (1824—1924)»:

6 Երկու դրոշմաթղթերի լուսանկարը, մեկը՝ Բայրոնի դիմանկարն է, մյուսում՝ Բայրոնը ապստամբների հետ (էջ 322):

7 «Լորտ Պայրոն և իր մահվան տարեդարձը» հոդվածում՝ «Ներվան տարեդարձը» ենթավերնագրով, էջ 323:

8 Որբերյանից ոչինչ չկա տպագրված:

9 Տիրան Կամարականը (1866—1941) ունի մի շերմ հոդված նվիրված Բայրոնին՝ «Գուն մեզի բարեխոս» վերնագրով, որ տպագրվել է «Ամենուն տարեցույցի» 1927 թ. հատորում (էջ 260): Հոդվածը գրվել է 1923 թ. հունվարի 10-ին՝ «Պայրոնյանների համաշխարհիկ ընկերության» խնդրանքով՝ որպես հայ գրողի խոսք Բայրոնի մահվան 100-ամյակի առթիվ:

4

1 Սգտագործված է ամբողջ աշխարհը, տառապանքների աշխարհը, ժամանակամիջոցը իմաստով: Ակնարկում է ինչպես Որբերյանի թափառումները, այնպես էլ «Միանքների» հերոսի շրջագայությունը աշխարհով մեկ:

2 Արշակունցի մահացավ կեյզինում 1922 թ. հունվարի 2-ին, և այնտեղ էլ թաղվեց:

3 Կորֆու կղզու մասին է խոսքը, ուր Թեոդիկն ապրել է 1922—1925 թթ.:

4 Պատրիարքը Զավեն Տեր-Նդիխյանն էր: Նա Թեոդիկի հետ պետք է, որ մտերիմ եղած լինի, քանի որ աջոտրում էլ միասին են եղել:

5 Որբերյանի գրությունները երկուսն են. հոդվածը կոչվում է «Աբյուրինթոս», տպագրված է 1927 թ. Տարեցույցի 475-րդ էջում, իսկ բանաստեղծությունը՝ «Արուսյակիս», էջ 273:

6 Բաշալյան Լևոն (1868—1943), գրող: Բաշալյանը այդ ժամանակ Փարիզում էր, «Ամենուն տարեցույցն» էլ Փարիզում էր տպագրվում:

7 Ալլահվերդի Որդի—Ֆրանսահայ նշանավոր բժիշկ, հայրենասեր: Արժանացել է «Յրանսիական երախտագիտության արծաթ շքանշան» կառավարական պարգևին:

8 «Ամենուն տարեցույցի» 1928 թ. գրքում (էջ 172) տպագրվել է Թեոդիկի առաջարկած հոդվածը ջրարուժության և Կնայրի մասին «Ջրարուժություն» վերնագրով:—Հայր Քնայր (1821—1879)—գերմանացի ժողովրդական բժիշկ, հոգևոր հայր, «Հիվանդությունների դարմանումը և առողջության պահպանումը ջրարուժությամբ» հանրահայտ գրքի հեղինակ: (Ապրել է Մյունխենի մոտ գտնվող Վեորիահոֆեն գյուղում):

В. А. ГАБРИЕЛЯН — Письма Теодика Рубену Ворберяну (р е з ю м е).— Эти письма знаменитого западноармянского культурного деятеля (редактор, филолог, писатель) Теодика (Теодорос Лапчичян) поэту Рубену Ворберяну поведствуют о страданиях Западной Армении в 1915—1926 гг., мытарстве армянской интеллигенции, являются свидетельством их патриотизма, преданности армянской культуре.